

ՆՈՐԱԳԻՏ ՔԱՆԴԱԿԱՊԱՏԿԵՐԲ ՄԵՐ ՓՐԿՁԻՆ

Ա. ՆԵՐՍԵՍԻԱՆԻՆ:

Թերեւս «Բագմավեպ»-ի ընթերցողը տեղեակ կամ լսած լինեն, փոքու ժամանակաւ ինչ յառաջ հրատարակեալ՝ մեծածախ երկհատորեան մէկ Մենագրութեան մասին («The Great Chalice of Antioch», որոյ վերայ ընդհակառակ է, ամենանախնականն գիտելի մեզ մինչ ցարդ, պատկերը Քրիստոսի, Աւետարանչաց ե ոմանց Առաքելոց), հանդերձ վաթնանշափ տախտակոց, որոյ Հեղինակն է քաջածանօթ ե հանճարեղ հնարանն Դր. Այսըն (Dr. Gustavus. A. Eisen, երբեմն Գլուխ գիտութեանց Համալսարանական Ճեմարանին Կալիֆորնիոյ): Սոյն Մենագրութեան վաճառու Մենագիր մէջ (գինն L. 35), առ այժմ, յանձնուած է Պարոն Հէլիփ (Mr. C. J. Healey, 36, Wetherby Mansions, Earl's Court Square, S. W. 5) ե ցուցադրեալ էր ի Redfern Gallery, 27. Old Bond Street (Յունիս 12էն մինչև Յուլիս 19), ուր ես պատեհութիւնն ե հաճոյքն ունեցայ, փոքր ի շատէ, վերահասու լինել նիւթոյն՝ սոյն յօղուածս գրելոյ նպատակաւ, թէպէտեւ, հարկաւ, համառօտիւ:

Առայժն Հատորն, մի հարիւր իննսուն ե չորս իջեան, հետզհետէ բովանդակում է. — Նախարան, Մանրաման նկարագրութիւն Մեծ Սկիհին, Նորա արուեստն, Աթոռի վերայ բազմեալ անձնաւորութեանց նոյնութեանց հաստատումն, Հնագոյն Անօթը յարաբերական ընդ Սկիհին, Սկիհին զարդարանաց խորհրդաւոր նշանակութիւնքն: Սկիհին մէջ զետեղեալ ներքին բաժանին կամ բովանդակն: Սկիհին վրեական, հարազատութիւնն ե թուականն, Հին կենդանագիրը Քրիստոսի ե Առաքելոց, Ներքին բովանդակն (առնչութեամբ Սուրբ Թախիս — «Holy Grail») ըստ պատկերաց

ե աւանդութեանց, Ամփոփումն նկարագրից Անտիոքայ Սկիհին, Երկրորդ Հատորն բուրովին ընծայուած է վաթնանշափ տախտակաց ե զարդապատկերաց:

Բ. ԳԻՏԵՏ ՍԿԻՀԻՆ:

Քանի մի՝ Արարացիք, յամին 1910, մինչդեռ աշխատում էին ջրհոր մի փորելոյ գործով՝ հնակառոյց Անտիոք քաղաքում, դիպեցան քանի մի ստորերկրեաց շտեմարանաց: Գրգռեալ հետաքրքրութեամբ՝ իւրեանց խուզարկութիւնն յառաջ մղեցին խառնիխուռն փլատակաց մէջ ե յաւղեացան ի լոյս ածել կոյտ մի արծաթեայ անօթից բեկորը, մի հատ խաչ մեծադիր՝ վասն թափօրի գործածութեան, ե միւս մի փոքրիկ՝ առձեռնեայ, երեք կազմը մատենից քանդակեալ սրբոց պատկերօք ե ուրիշ արծաթեայ մթերք, որպէս ե արծաթեայ սկիհ մի պարզ ե անպաճոյճ, բայց ըստ փորագրութեանն՝ կանուխ Միջին դարուց վերագրեալ: Սակայն՝ այս պատուական ե կարի հետաքրքրական եկեղեցական գանձուց մէջ՝ ամենանշանաւորն հանդիսացաւ անզուգական արծաթեայ Սկիհ մի (որ սակաւ նուիրականութեանն այժմ կոչւում է Մեծ Սկիհն Անտիոքայ) առանց փորագրութեան՝ ըստ մասին թուականին (ե եթէ ունի իսկ թուական, դեռ անստոյգ) բայց ըստ քանդագործութեանն՝ հրաշակեօր, ե ըստ զարդարանացն՝ յոյժ խորհրդաւոր: Հոր փորող պարզամիտ արաբացիքն, անկասկած իրական արժանեացն այս գեղեցիկ մթերից, ցրուեցին զայնս ձեռքէ ձեռք, Միջագետաց ե վերին Ասորոց ոմանց բնիկ քնակչաց մէջ:

Փոքր ինչ յառաջ քան գծագրումն աշխարհադղորդ մեծ պատերազմին, ի Փարիզ ե ի Նիու Եօրկ հաստատեալ ծանօթ Գուշակիթ Խրդարը, լսելով այս անգին գիւտոյ մասին, առաքեցին իւրեանց եղբայր մէկն առ Միջագետս, ուր նա եռանդագին երկար որոնմամբ, վերջ ի վերջոյ յաջողեցաւ ձեռք բերել գրեթէ համայն Նորագիւտ սրբազան մթերքն, զորս բերելով ի Փա-

բիզ՝ Մեծ Սկիհն յանձնեցաւ Պարոն Ալֆրէդ Անդրէի (Alfred André), որ մեծ հնարագիտութեամբ մարթացաւ Սկիհին մետաղին վերայ բազմադարեան աղօտացուցիչ թանձր թթուակոյտն մաքրել և

ապահովութեան, ուր դեռ զոյ ի պահեստի, անտարակոյս՝ որպէս սրբազնանուէր ժառանգութիւն իւրեանց ընտանեաց։

Յամին 1915, Քուչակժի Եղբարք յանձնեցին Սկիհն վստահելի հնագէտ Դր.



“ԱՆՏԻՌՔԱՅ ՄԵԾ ՍԿԻՀԸ.”

DIAGRAM OF THE CHALICE [International Copyright by Kouchakji Frères, New York].

ի լոյս անել համայն բարձրաքանդակ պատկերքն և զարդանկարքն։

Յամին 1914, ի նախերեկոյին սկզբնաւորութեան Պատերազմին Մարնի (Battle of Marne), Քուչակժի Եղբարք փոխադրեցին Մեծ Սկիհն առ Նիու Եօրկ վասն

Այսրնի, որ ութ տարի ուսումնասիրելով զայն առ անհերքելի վաւերացումն իւր փաստից և անթերի խուզարկութեանց, վերջ ի վերջոյ հրատարակութեան տուաւ իւր հոյակապ Մենագրութիւնն առ այն սակա, զորմէ յիշեցաք ի վեր։

Գ. ԱՆՏԻՈՒՔ:

Յամին 300 (Ն. Ք.), Սելեկոս Ա. Նիկատոր (312-281. Ն. Ք.), շինեց Անտիոքը քաղաքն Որոնտէս գետոյ վերայ, որ Սելեկեան Հարսուսթեան տեղութեան միջոցին, ընդունում էր որպէս ամենանշանաւոր Մայրաքաղաքն Արեւելքում: Մեր Հայոց թագաւորն, Մեծն Տիգրան (94-55. Ն. Ք.), տիրեց զայն 84ին, իւր յաղթական շարժանաց ընթացքում առ Միջագետս և իւր քսան տարի իւր արքայանիստ քաղաքաց մէկն էր: Անտիշապէս յետ քան զՔրիստոս, Անտիոք զխաւոր դաշտն էր Առաքելոց քարոզութեանց և Դր. Այսըն թելադրում է որ այս Մեծ Սկիհն Երուսաղէմէն Անտիոք փոխադրեցաւ և անդ պահպանեցաւ զկին անկմանն Երուսաղէմի: Յամին 341, Կոստանդինոս Բ. կատարելագործեւ և օծել տուաւ Անտիոքայ «Սսկեայ» Բապտիսմոս, որոյ հիմնադիրն էր իւր Հայր Մեծն Կոստանդինոս և որոյ եկեղեցական սպասուց մէկն է երեւում, առանց Հակասութեան՝ ըստ Դր. Այսընի և ոմանց ըննադատից, այս սրբազան նշխարն: Պատմութեան մէջ կարողում ենք, որ յամին 362, Յուլիանոս Ուրացոյ կայսեր հրամանաւ կործանուեցան Անտիոքայ բոլոր Սրբատեղիք և ըստ Դր. Այսընի թելադրանաց, կարելի է որ Անտիոքայ Մեծ Սկիհն մասն էր կազմում եկեղեցական զանձուց, որոց զազոնատեղին թէնդորոտոս, Գանձապահ Կոստանդիանոսի ոսկեայ Բապտիսմոս, ժխտեց յայտնելոյ և որոյ վասն չարաչար մարտիրոսացաւ: Գոյ, նա ևս, աւանդութիւն մի, թէ յամին 362, Յուլիանոս Ուրացոյին հալածիչը Քրիստոնէից՝ Անտիոքայ Մայր եկեղեցւոյ Սուրբ Սպասըն գետին հարկանելով ոտնակոխ արարին, և Դր. Այսըն հաւատում է որ Մեծ Սկիհին վերայ փոքրիկ մի փոսացեալ արատն (աւերելով ընչին մի ջանդակ — թերեւ թուականն) այս ոչպէրին է վերաբերելի: Գիտելի է, նաև, որ Խոսրով Ա. Նուշիրվան (531-579, Յ. Տ.), հրոյ ճարակ տուաւ

Անտիոք քաղաքն (538) բայց ազատ թողեց Մայր եկեղեցին, և Խոսրով Բ. Պարպեզ (590-628. Յ. Տ.) զրաւեց Անտիոք 611ին, Հաւանական է որ Անտիոքայ Մեծ Սկիհն վերջին անգամն թաղուեցաւ, ի ձեռն երկիւղած հաւատացելոց, Մայր եկեղեցւոյն ներքոյ (որ եկեղեցի, ըստ աւանդութեան, կառուցեալ էր Նոյն իսկ այդ տեղում, ուր 1910ին, յիշեալ նշխարն գտնուեցան), յամին 611, որ բացատրում է Միջնադարեան սկզբնաւորութեան ժամանակաց ուրիշ ջանի մի եկեղեցական Սպասը. միասին գտնուելն՝ ընդ առաւելքը հնագոյն Մեծ Սկիհին:

Գ. ԹԻԻ ՊԱՏԿԵՐԱՅ:

Քանդակեալ պատկերն տաանեերկու հատ են ընդ ամենայն, այսինքն Քրիստոս (երկիցս), չորեքին Աւետարանիչք և վեց Առաքեալք, ամենեքին նստեալք յԱթոռ՝ վեց ի խոնարհ և վեց ի վեր, երկու կարգաւոր հորիզոնական դասաւորութեամբ: Կոփեալ են քարձրացանդակ՝ Սկիհին մայր մետաղէն: Աւետարանիչք և Առաքեալք յայտնում են, մէջ մի աջ ձեռն կարկառեալ առ Քրիստոս, անտարակոյս՝ ի նշան ողջունի, և ի ձախ ձեռին պինդ ունելով իր ինչ՝ դեռ անբացատրեալ, բայց թերեւ կրելով Քրիստոսական աւանդեալ պատգամը առ ի քարոզել զբանն:

Ե. ԶԱՐԳԱՐԱՆՔ:

Սոյն կարի նուիրական քրիստոնէական նշխարին արտաքին երեսն ներկայացնում է, որպէս հիմն զարդարանաց, վեց երկնիւղեան կամ տաանեերկու բնեան տեքնախիտ և ողկուզալի որթք խաղողոց, որը ծագումն առնելով Սկիհին ստորոտէն՝ տարածեալ ոլորապտոյտ ոստովք՝ երկու տաանիցս անգամ ի ձև օղակի, կամ յաւել մօտաւորապէս, ի նմանութիւն «Տ» տառին, կազմում են զարդարանաց շահապատեալ լայն գոտի մի՝ շուրջ ընդ համայն արտաքին մասին Սկիհին: Ընթեա-

նում ենք Յունան—Հոմովական դիցարա—
նութեան մէջ, որ խաղողդ որթն ունէր
իւր մասնաւոր ստուերական խորհուրդն
նախաքրքիստոնէական նաւակատեսաց հան—
դիսակատարութեանց մէջ, և գիտելի է
որ նոյն ըմբռնումն փոխառաբար շարու—
նակեցաւ, անբացատրելի իմն զանխուլ
հաւանութիւն, ի մէջ Գրիստոնէից՝ յընթացս
քանի մի դարուց (և գուցէ մինչ ցայսօր
իսկ) թէ՛ ընդ Արեւելեանս և թէ՛ ընդ Ա—
րեւմտեանս: Սկիհին զարդարանքն վերջա—
նում են, զառ ի վեր, վարդագոտեալ
միով (բովանդակելով, ընդ ամենն, իբր
յիսուն վարդ) շուրջ ընդ արտաքին շըր—
թամբ, որոյ շարն տարբերեալ է միայն
մէկ տեղ, ուր ընդմիջում է փայլուն Աստղ
մի, իսկ և իսկ ի վեր քան զկեղրոնն՝ ուր
Գրիստոս զոյ բազմեալ յԱթոռ փառաց,
որպէս փրկիչ Աշխարհի:

Որպէս որ կարելի է դատել Սկիհի
պատկերէն (որ, աստանօր յառաջի ենք
բերում «Բազմավեպ» յարգոյ ընթերցո—
ղաց), զմայլելի իմն զազափարական ա—
րուեստագիտութեամբ՝ մէն մի պատկեր
Աւետարանչաց և Առաքելոց քանդակեալ
է նպատակայարմար մերձաւորութեամբ
երկու պատկերացն Գրիստոսի: Ամենեքին
նստուցեալ են յաթոռ առանձնակի, իւրա—
քանչիւր յիւրում օթեանի և շրջապատեալ
սաղարթօք և ողկուղովք խաղողոց: Տես—
նում ենք քանի մի խորհրդանիշք ի միջի
քանդակագործութեանցն (զորս ունիմք բա—
ցատրել ըստ իւրեանց կարգի), բայց ըստ
իմ խոնարհ կարծեաց (բացառեալ, ի
հարկէ, Սկիհին աննման և անգին բուն
յատկութիւնքն), ինչ որ մեծապէս ուշա—
գրաւ է հանդիսանում և զեղեցիկ ծնունդ
մտային յղացման արուեստագործին, քանի
մի փոքրիկ կենդանեաց պատկերացումն է
քանդակաց մէջ, զոր օրինակ՝ խխունջն,
ծղրիդ, թիթեոն, ճագարք կամ գետնա—
բնակ նապաստակը, թեամիոփ տատրակը
կամ աղաւնիք և ուրիշ փոքրիկ թռչունք,
որք: ապաքինեալ խաղաղոյ որթոց նո—
րափթիթ ընծիւղոց մէջ, հիասքանչ երկ—
չտուութեամբ՝ հրճւում են բախտաւորու—

թիւնն ունենալոյ հանդիսատես լինիլ սըր—
բազան բազմականաց փառաւոր տեսա—
րանին:

Ս. Տէր Մ. Գրիգորեան
(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

Տ Ա Ն Դ Է Ա Ա Լ Կ Ի Ե Ի Ի

ԱՍՏՈՒԱՅՈՒՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ա Ր Գ Ա Յ Ո Ւ Թ Ե Ն

▽

ԵՐԵՍՈՒՆԵԻՄԷԿԵՐՈՐԴ ԵՐԳ

Տաճոյ կը շարունակէ ճկարագրութիւնն երկ—
մայիմ ճրկու Արքուձիքներում, յետոյ կը պատմէ
թէ ի՞նչպէս Նրամուհի կ'իրթայ կը մտնի իր ա—
թոռիմ զոյա երամեղեաց մէջ, զրկելով իր տեղ
Ս. Բեռնարդոսը՝ որ ցուցմէ իրեն Ս. Նոյսիմ փառ—
քը:

ՈՒՐԵՄԸ ինձ ձեռով վարդի ձիւնաթոյր
Ձինուորութիւնը սուրբ յայտնի կը ցուցնէր
Ձոր Գրիստոս հառա ըրաւ իրեն՝ արիւնօք:

Միւսը սակայն որ կը տեսնէ թռչելով
Եւ կ'երգէ փառքը գինք օրով վառողին,
Եւ բարութիւնն որ զինքն ըրաւ այնքանի:

Մեղունեւու պարսիս նըման՝ որ կը մխի
Նաղիկնիւր մերթ մէջ՝ և մերթ կը դառնայ
Հոն՝ ուր որ իր գործն անուշի կը փոխուի:

Կ'իշխէր վարդին՝ մէջ մեծ՝ աշխարհ տերեւով
Պենագարդուած, կը բարձրանար յետոյ վեր
Հոն ուր որ իր Մէրը յաւէտ կը բնակի:

Դէմքերն անոնց բոցեր էին կենդանի,
Թեւերն՝ ոսկի, Եւ միւսն այնքան ըսպիտակ,
Որ ոչ մի ձիւն կը ժողենայ այն եզրին:

Երբ ծաղկին կ'իշխէին մէջ՝ թերթէ թերթ
Կը բոլեւին խաղաղութիւն Եւ հաւոյ,
Ըստանալով զայն թեւերնու բաբախմամբ:

Բայց բիւրաւոր այն բազմութիւնը թռչող
Որ կը մտնէր բարձունքին մէջ ու ծաղկին
Ձէր արգիլիւր պայծառութիւնն ու տեսիլն:

Որովհետեւ էական լոյսը կ'անցնի
Տիեզերքէն թափ՝ համեմատ արժանեացն,
Անպէս որ ոչ ինչ կրնայ զայն արգիլել: